ԻՐ ՕՐԵՐԻ ՀԵՏ

Պոեզիայի հանդեպ Մարո Մարգարյանը լայնահայաց վերաբերմունք ուներ, լրջմիտ ու հաճախ քննական-վերլուծական մոտեցումով էր գնահատում այն.

Եվ այս աշխարհում
Այսքան անեզերք, այսքան բազմազան
Թղթերը պիտի իրենց մեջ պահեն
Կրակն իմ հոգու...[1]:

Այս քառատողով է բացվում բանաստեղծուհու «Օրերի խորքից» ժողովածուն, որը լույս է տեսել 1975-ին և յուրովի ամփոփում է նրա վերջին տասնամյակների ստեղծագործական ուղու լավագույն երգերը: «Ամեն, ամեն ինչ կրակով միայն և սիրանյութից» _ առաջին շարքի խորագիրն է սա, որտեղ կրակի պատկեր-խորհրդանշանը նորից դարձել է Մ. Մարգարյանի պոետական երևակայության գլխավոր բաղադրիչը: Շարքում հեղինակի դիտակետը խոհական-փիլիսոփայական մտորումներն են, որոնք խտացված են բանաստեղծական կարճ ձևերի մեջ (բացառությամբ «Ծովերի հետ» և «Իմ երգերս» փոքրիկ կտորների) բոլորն էլ անխորագիր: Չափածոյի կարճ տեսակները, որոնք միշտ էլ Մ. Մարգարյանի սիրած ժանրային ձևերն են եղել, «Օրերի խորքից» գրքում ավելի խորքային իմաստ ու բովանդակություն ունեն, քանզի բանաստեղծուհին գնացել է փիլիսոփայական ընդհանրացումների ճանապարհով, իրեն ու երևույթները քննում է օբյեկտիվ իրականության կենդանի շարժման համատեքստում, փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ.

Սիրանյութից շաղախեցիր
Ինձ, աստված,
Եվ դրեցիր
Տարածության մեջ անսեր... (7)

---

[1] Մ. Մարգարյան, «Օրերի խորքից», 1975, էջ 5 (այսուհետև կնշվեն միայն էջերը):

Հակադրամիասնության այն գաղափարը, որ ընկած է այս քառատողում, պարզում է մի ներքին ու խոր ներհակություն, որ գոյություն ունի բանաստեղծուհու և իրականության միջև: Այստեղ Մ. Մարգարյանն այլևս այն շուտ հափշտակվող-հրապուրվող անհատը չէ, որին ամեն ինչ վարդագույն էր թվում, աշխարհը համակ կարծես երջանկություն ու բախտավորություն էր բուրում, իակ մարդիկ բոլորն էլ նրան հարազատ էին: Տարիքն ու ժամանակը բանաստեղծուհուն դարձրել էին սթափ, լրջախոհ, երևույթները քննում էր նա խորքային շերտերով և հանգում էր ճշմարիտ եզրակացությունների: Պոետը մեծ առաքելության խորհուրդով է աշխարհ եկել և ոչ կարճատև ժամանակամիջոցի հատույթով: Նրա բառը ծանրակշիռ պիտի լինի, քանզի ինքը բառ արարողն է ու այդ բառի տերը, իսկ տառերից հյուսված բառը դարերի ուղեկից պիտի դառնա.

Խշշում է գետը, թշշում է գետը,
Կռվում է ափի քարերի հետ:
Իսկ բանաստեղծը բառերի հետ է,
Հոգում ծանրացած քարերի հետ է,
Տառերի հետ է,
Դարերի հետ է (6):

Կրակի պատկեր-խորհրդանշանին դիմելով՝ Մ. Մարգարյանը սրում է արվեստագետ-պոետի քաղաքացիական-բարոյական դերը, որի խորհուրդը ոչ թե ընդմիջումներով արձակած ջերմությունն է, այլ «տևական հրդեհը», ամեն ինչ մաքրող, կեղտից ու մուրից զտող հրդեհը.

Ամեն, ամեն ինչ
Կրակով միայն
Քեզ մոտ սկսվեց,
Ոչ կրակով էլ
Գնաց անզիջում (9):

Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ, զուգահեռ համեմատությամբ տանելով կրակ-հրդեհի և բանաստեղծի անհատականության թեման՝ Մ. Մարգարյանը վերջինիս ներքին ձուլվածքի բարդության ու բազմազանության ծալքերում, որքան էլ դժվար ու խոտոր, տեսնում է նրա առաքելության մեծ շրջանակները:

Հատկանշական է նախ այն, որ ինչքան խորունկ ու լայն են բանաստեղծուհու ձգտումները, որքան բարի ու գեղեցիկ է նրա մարդկային-քաղաքացիական առաքելությունը, այնքան նեղ ու անձուկ են անհատական-

անձնական հնարավորությունները: Եվ կարծես ամենևին դժգոհ չէ դրանից, քանզի դեռ կան չպարզած սերերի ու կարոտների տաք հիշատակներ.

Կարմիր ու կապույտ
Իրարու փարած
Հորիզոնների ծիրում
Ահա իմ տունս:
Ներքին անդունդ
Ու վերից ավազ
Հիմքերս, հունս (12):

Թվում է անմեղ խոստովանություններ են, սակայն այդ խոստովանությունների տակից հառնում է բանաստեղծուհու ներքին խռովքը, հստակորեն գծագրվում է նրա անբավականությունը, դժգոհությունն ու տագնապները: Ու եթե համեմատելու լինենք Մ. Մարգարյանի ընդամենը երկու տասնամյակ առաջ գրած բանաստեղծությունները նորերի հետ՝ կհստակվի, որ նրան շատ բան պետք չէ, օվկիանոսի չափ խնդություն կբերի սրտին անկեղծորեն ասված մի բառը, մի խոսքը, մարդկային մի ժպիտը: Սակայն նույնիսկ դա են խնայում: Ընդհակառակը, ժամանակն ու մարդիկ շարունակում են ծյուն մաղել նրա իղձերի վրա, և բանաստեղծուհու քնարում ուժգնանում են անհանգստության ու տագնապների կոչնակները.

Մի խոսք, մի բառ,
Կես մի ժպիտ ,
Եվ օվկիանոս մի խնդություն.
Որքա՞ն քիչ է հարկավոր քեզ,
Անհուններով լեցուն հոգի,
Եվ ո՞վ է որ
Այդ մի քիչը քեզ չի տալիս (14):

«Օրերի հետ» ժողովածուի նոր երգերը պարզում են, թե ինչպիսի հոգեբանական վերածնում է կատարվել հեղինակի հետ. փոխվել է վերաբերմունքը մարդկային ու հասարակական երևույթների հանդեպ, շրջադարձ է կատարվել մտածողության մեջ, խորապես զգալի են դարձել տրամադրությունների, ռիթմերի, հնչերանգների փոփոխությունները: Այս երևույթը, իհարկե, միայն Մ. Մարգարյանի ստեղծագործությանը ներհատուկ ու բացառիկ հատկանիշ չէր և բացատրվում էր խորհուրդների երկրում տեղի ունեցող աննախադեպ զարգացումներով, Ստալինի մահից հետո սկսված քաղաքական ու գաղափարական ծնհալով: Մի քանի տարի առաջ հրատարակվել էր

բանաստեղծուհու «Ձնհալից հետո» ժողովածուն (1965): Թվում է՝ Ս. Մարգարյանը «դատարկել էր սիրտը», պետք է, որ հանգստացած լիներ: Սակայն անչափ երկար էր տևել «Լցված լռությունը», ասելու-կիսվելու շատ բան կար: Ետևում «սխալների մի ամբողջ պատմություն էր» ընկած, զգում էր, որ թերի շատ բան կար, ազնիվ ու ճիշտ ճամփաները ծռել են իրենց սերնդի առաջ, ուրեմն՝ պետք է ըմբոստանալ կեղծիքի դեմ, լույս աշխարհ հանել «շիպ շիտակը, վեհն ու խորը», այլևս դեն նետել չնչինն ու անկարևորը, հայտնաբերել, թե «Ինչու՞, ինչու՞. Ի՞նչ էր եղել. Ո՞վ էր շաղել, ի՞նչն էր շեղել՝ Ընթացքն ուղիղ ո՞վ էր ծռել, Ո՞վ էր կեղծել, Ի՞նչն էր պղծել»: Հարցերի այս շարանը աներկբա պատասխաններ էր պահանջում, իսկ բանաստեղծուհին չէր ուզում ժամանակի պարտապանը մնալ:

Փայլուն բանաստեղծություն է «Դեռ չեմ պոկել մի ցողուն, դեռ չեմ խփել մի քարի» տողով սկսվող գործը, ինքնատիպ խոստովանություն լինելուց զատ՝ բարության՝ առաքինության, հումանիստական աշխարհազգացման յուրովի շաղախ է՝ գեղարվեստական հաջող ձևի մեջ.

Դեռ չեմ պոկել մի ցողուն, դեռ չեմ խփել մի քարի,
Կյանքի մթին ճամփեքին սրտիս ճրագը վառած,
Տեսքով սառն ու անտարբեր, բայց անձնուրաց ու բարի
Ես կարոտն եմ աշխարհի՝ կնոջ տեսք առած (205):

Խոհական մտորումների հնչերանգը, որն ըստ էության սրտաբաց զրույց է աշխարհի ու մարդկանց հետ, բանաստեղծուհուն ներկայացնում է լայն կապերի մեջ, կյանքային ուրույն համարժեքով: Առաջին հրատարակությունից հետո մի շարք խմբագրումներ են կատարվել: Ավարտական տան երրորդ տողը եղել է՝ «Բայց երբ վշտից վհատվեք, եկեք ինձ այցի», որը դարձյալ մարդասիրական անկեղծ հավաստիացումի շեշտվածություն ունի: Սակայն գրականագետ Ս. Սողոմոնյանը գրում է, թե «Այս բոլորով հանդերձ, թույլ է չարի դեմ մաքառող ոգին: Բանաստեղծուհին հայացքը հառում է դեպի երկինք, իրեն մատնելով մաղթանքի ու աղոթքի»[2]: Ստեղծագործության գաղափարական ուղղվածությունն ու հեղինակի մտայնությունը «չարի դեմ մաքառման ոգին» ցույց տալու նպատակ չունեն: Այն, ինչի ձգտել է

[2] «Սովետական գրականության պատմություն», հ. 2, 1965, էջ 507:

Մ.Մարգարյանը, գեղարվեստական հաջող մարմնավորում է գտել բանաստեղծության մեջ: Ինչի մասին էլ գրում է նա, թեմաների ու նյութի ինչպիսի ընտրություն էլ կատարում է, անց կացնում է իր հոգու միջով, հասցնում հուզապրումի այն որակին, որով կարողանում է վարակել ընթերցողին: Դրանով նա «շարժում» է ընթերցողի հոգին, քանզի քնարական հերոսի հոգեբանությունը արտահայտում է ճշմարտացիորեն: Երգի հուզապրումի ճշմարտացիությունը շատ բանով պայմանավորում է նրա բանականությունն ու հաջողությունը:

Մ. Մարգարյանի պոեզիան իր էությամբ անկեղծ է և խոստովանանքային ուղղվածության է միտում: Նրա բանաստեղծությունները հիմնականում մենախոսություններ են՝ աշխարհի բանը բացահայտելու մղումով, իսկ երբ դիմում է երկխոսությունների՝ իր ու մարդկանց միջև կապը դրամատիկ բովանդակություն է ստանում, որովհետև հաճախ նրա ցանկություններն ու երազանքները հանդիպում են անհաղթահարելի դիմադրության, և հոգին մղկտում է խուլ ցավից.

Շատ իղձ ու երազ անավարտ մնաց,
Ոչ շատ բան կյանքում թողիր դու թերի,
Եվ ժամանակը խիստ ու սրընթաց
Քեզ խոշոր բաժին տվեց հոգսերի... (362)

Առհասարակ Մ. Մարգարյանի պոեզիայում ներքին տվայտանքների, հոգեբանական տագնապների լարերը չափազանց զգայուն են ու հասարակայնորեն ակտիվ: Բանաստեղծուհին այն հեղինակներից է, ովքեր մերժում են անդավանանք, վերացական պոեզիան և իրենց ստեղծագործությունը կառուցում՝ ունկնդրելով ժամանակի զարկերակին: Սա ինքնին ենթադրում է հասարակական-քաղաքական անսխալ դիրքորոշում, անհանգիստ ու լարված կյանք, նախորդ սխալներն ուղղելու նշանառությամբ և հին ու նոր շեղումների դեմ անվրեպ հարվածներ: Դիմելով բանաստեղծական ուրույն ներսուզումների՝ առանց հռետորական կոչերի ու ավելորդ պաթոսի, Մ. Մարգարյանը ելնում է ստեղծված ու տարածման մեծ չափեր ընդունող տխուր երևույթների դեմ, որոնց շնչից լռում, մարում-կորսվում են սեր ու հավատ: Ժամանակները սպասումների, երազանքների ավերակներ են թողնում իրենց ետևում, ծուխ, ու հոգեկան ալեկոծություններ: «Ինչ-որ մի արդար ու շատ անարդար բան կա աշխարհում»,- գտնում է Մ. Մարգարյանը, անամոք ու

սրտակեղեք մի բան, որ փշրում է լավն ու թանկը, խորունկ մորմոքում անհայտ մի կարոտ, անդարձ թաղում սպասված երջանկության պատրանքը:

Բանաստեղծության պատկերային կառուցը հստակորեն բացում է շղթայական կորուստների ու անկումների այն սարսափելի բուրգը, որի տակ ճզմվում են մարդկային թանկ արժեքներ: Սա բանաստեղծուհու այն կեցվածքն է, որը ենթադրում է քաղաքացիական շեշտված ջիղ, կյանքի հանդեպ անհանգիստ վերաբերմունք և ակտիվ խառնվածք: Մարո Մարգարյանը հոգեկան նուրբ թրթիռների երգիչ է և քանիցս նշվել է, որ հիմնականում նա քնարերգու է ու գործ ունի մարդկային ներաշխարհի քնքույշ լարերի հետ: Սակայն երբ դիմում է իրականության խորքային շերտերին, քննում է կյանքի հակասությունները, նրա քնարի լարերը դառնում են ջղուտ, ասես պրկվում են միանգամից, իսկ ինքը՝ հեղինակը հանդես է գալիս որպես ժամանակի բարդ ալեկոծությունները իր հոգում կրող, դրանցով ապրող արվեստագետ: Նրան հասու է դառնում ներքին տառապանքի գաղտնիքը, ամբողջապես այրվում է մարդու ցավերով, կրում հասարակության տագնապների ծանրությունը: Եթե առաջին դեպքում, ինչպես ինքն է ասում՝ «թավիշ-թավիշ, գունեղ-գունեղ, ալիք-ալիք լույսեր են ցայտում» նրա տողերից, ընթերցողին ներարկում դրանց վարար շիթերը, պարուրում մեղմ տրամադրությամբ, երկրորդ դեպքում՝ աշխարհահիացումի ու հաշտության ռիթմերը փոխարկվում են ծանր ու տագնապոտ տրամադրությունների, երբեմն նույնիսկ հիասթափությունների: Ըստ Մ. Մարգարյանի՝ աստված մարդուն ստեղծել է «լույսի համար ու դաշնության»: Այդ ծիրով հղացված նրա երգերը աստղերի ակունք են, «աստվածներ կերտող, տիեզերք թերթող», հզոր-հաղթող են, անհուն, անսահման ու խոր, կարող են երկինքներ շրջել, ծովեր կամրջել, գետեր կանգնեցնել: Հակառակ պարագայում դժվարանում է բանաստեղծուհին «լույսի ու դաշնության» երգեր հյուսել, հոգեպես բեկվում է, «մերթ սրտազեղ, սրտակտոր, մերթ կարկամած, խեղդված ու լուռ, մերթ հուսահատ համր ու վհատ, հարբածի պես պատեպատ» զարկվում: Հոգեբանական այդպիսի պահերն ու ապրումները ստիպում են բանաստեղծուհուն խոստովանելու, թե «Կապույտների ծիրում երազները մեռան» և խռով հոգով գրելու այդպիսի տողեր. Աստվածները միշտ էլ

Սառնասիրտ են եղել,
Կոշտ ու բիրտ են եղել
Աստվածները:
ԵՎ աստղերը բոլոր
Շատ հեռվից են վառել,
Ու մեր շվար կյանքին
Կույր աչքեր են հառել,
Ու քանի որ նրանք
Շատ վերև են թառել,
Մեզ վերից են վառել
Աստվածները... (56):

Շեշտադրումներն այստեղ հստակ են, կտրուկ, զիջումների կամ հաշտվողականության ոչ մի քայլ: Բրանաստեղծուհին բողոքելով աստվածների «սահմանած» կարգ ու սարքի դեմ, բողոքում է երկրային օրենքների դեմ, որքան էլ ասոցիացիաները տողերի արտաքին մակերևույթում չեն արտահայտված, սակայն մարդկային ու սոցիալական սուր դիտարկումներն այնքան թափանցիկ են, որ միանգամայն տեսանելի են դառնում զուգահեռները: Ու ստեղծագործության մեջ Մ. Մարգարյանի քաղաքացիական կեցվածքը, գաղափարների ու մտածության ուղղվածությունը կրկին մնում են նրա գեղագիտական իդեալների նպատակակետում: Համոզված ես, որ նա էապես զգում է ժամանակի բարդությունը, ապրում է դարի ջրապտույտների ու հակասությունների ծանրությունը: Բազում բանաստեղծություններում այդ զգացողությունների ու ապրումների հայտանշանները իմաստավորված են գեղարվեստական-պատկերային եղանակներով, սուր ու տագնապալի գունային միջոցներով:

Ճիշտ գտնված էպիտետներն ու համեմատությունները, խոսքի փոխաբերական իմաստները, առհասարակ մետաֆորային մտածողությունը Մ. Մարգարյանի պոետիկայում ստեղծում են ինքնատիպ խորհրդանշաններ, զուգորդություններ, բառ-պատկերային մի համաձուլվածք, որի պահունակներում անպակաս են քնարական-հուզական շերտերը, և՝ փիլիսոփայական խոհը: Նմանատիպ բանաստեղծություններում, իհարկե, հանդիպում ենք նաև թախծալի ու նկուն տրամադրությունների, հեղինակն ապրում է հոգեկան փլուզումներ, ինչ-ինչ կորուստների զգացողություններ և այլն: Այս ամենը շատ բնական է ու տիպական Մ. Մարգարյանի խառնվածքի տեր պոետի համար: Նա

տենչում է կեցության ազատ ու երջանիկ հանգրվաններ, սակայն անկատար մարդու ու աններդաշնակ իրականության պայմաններում տենչանքը ծնում է միայն հիասթափություն և դուռ բացում խորհրդանշան պատկերների, բեկված հոգու դուռը անդրադարձումների ու հաճախակի երազային-ուտոպիական վերապրումների առաջ: Կյանքի հակադրությունները, դրանց ճանաչումն ու ներքին ճնշող զգացողությունը խորացնում են երգերի դրամատիզմը, իսկ հոգևոր ձգտումների անկասելի հորձանքը դուրս է հորդում լույս ճառագելով: Տրամադրությունների այս ներհակ հանգուցակետերում էլ սրվում է Մ. Մարգարյանի փիլիսոփայական աշխարհայեցությունը ու, այնուամենայնիվ, վերջակետվում կենսական զգացողությամբ, հավատի լավատես սպասումներով.

Գարուն կլինի
Ոչ ծաղկած ծառեր,
Կլինի արդար ու բարի արև,
Եվ կիջնի բացված պատուհանիդ մոտ
Մի փոքրիկ, անտես
Ճառագայթանավ... (131):

Բազում երգերում այսպիսի «գուշակությունները» ինքնաբավ վերացարկումներ չեն: «Ճառագայթանավի» մարգարյանական խորհրդանշանը կյանքը հաստատող, կենսանորոգ հայացքի վկայություն է, նրա պոետական կեցվածքի կայուն գիծը: